[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
11	Ապրիլ	2019 թ.		U	3062039169
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
11	Ապրիլ	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար			

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	5	0	3	4	4	8		
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	3	4	4	8	/	1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ	N 11500166513800								
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834								
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ծանոթագրություններ)	Միավորի գինը	Ջեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	50103718 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN ARMAN, 6003780354
անուն, ազգանուն

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

11/04/2019 12:36:21

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հետմահու դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

07.12.2018թ. ք.Սևան

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ արդարադատության երրորդ դասի խորհրդական Հ.Մարտիրոսյանս, քննարկելով թիվ 50103718 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սևանի քննչական բաժնում 2018թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, հարուցված թիվ 50103718 քրեական գործով կատարված նախաքննության ընթացքում պարզվել է,որ Սևան քաղաքի բնակչուհի, 18.06.1982թվականին ծնված Լիա Արայիկի Հովսեփյանը 2003թվականի հուլիսի 12-ին ամուսնացել է Սևան քաղաքի բնակիչ Արմեն Ժորայի Գալստյանի հետ: Համատեղ ամուսնության ընթացքում 2004թվականին ծնվել է նրանց ավագ որդին՝ Գևորգ Գալստյանը , իսկ 2007թվականին ծնվել է կրտսեր որդին՝ Գարիկ Գալստյանը: Ամուսնանալց հետո՝ Լիա Հովսեփյանը իր ամուսնու և երեխաների հետ համատեղ բնակվել է Սևան քաղաքի Սայաթ-Նովա 19 շենքի 36 հասցեում գտնվող ամուսնուն՝ Արմեն Գալստյանին պատկանող բնակարանում: Լիա Հովսեփյանը 2018թվականի ընթացքում ինտեռնետ կայքերի միջոցով ծանոթացել,ապա սիրային կապ հաստատել Լոռու մարզի Վարդաբլուր համայնքի բնակիչ ոմն Դավիթի հետ: Նշված հանգամանքը Լիա Հովսեփյանի ամուսին Արմեն Գալստյանի կողմից պարզելուց հետո Լիա Հովսեփյանի և Արմեն Գալստյանի միջև սկսած 2018թվականի փետրվար մարտ ամիսներից տեղի են ունեցել ընտանեկան վիճաբանություններ: Լիա Հովսեփյանի կողմից նշված ինքնությունը դեռևս գործով չպարզված անձի հետ սիրային կապ հաստատելու մասին Արմեն Հովսեփյանը տեղեկացրել է Լիա Հովսեփյանի հարազատներին և այդ ամենից հետո ամուսինները շարունակել են համատեղ միևնույն հարկի տակ բնակվել և փորձել՝ մոռացության մատնել տեղի ունեցածը և դեռևս ամուսնալուծության հետ կապված կոնկրետ որևէ քայլերի չեն դիմել, թեև նման քայլի դիմելու վերաբերյալ պարբերաբար ընտանիքում քննարկումներ եղել են:

2018թվականի սեպտեմբերի 27-ին, ժամը 20-ի սահմաններում Սևան քաղաքում գտնվող իրենց բնակարանում հերթական անգամ ամուսինների միջև իրենց ամուսնալուծության վերաբերյալ տեղի է ունեցել խոսակցություն,և այդ զրույցին ներկա գտնվելու համար Արմեն Գասլտյանը զանգահարել և իր բնակարան է հրավիրել Լիա Հովսեփյանի մայր՝ Սվետա Դավթյանին,սակայն մինչև վերջինիս իրենց բնակարան գալը, Լիա Հովսեփյանը դուրս է եկել իրենց ննջասենյակից մտել է խոհանոց,վերցրել տանը գտնվող կենցաղային օգտագործման համար նախատեսված քացախաթթու իր մեջ պարունակող տարան և այդ տարայից,որոշակի քանակությամբ օգտագործել է, խմել, որը նկատել է Լիա Հովսեփյանի որդի՝ Գարիկ Հովսեփյանը, բղավել և հորը կանչել, սակայն արդեն ուշ է եղել Լիա Հովսեփյանը արդեն իսկ որոշակի քանակությամբ այդ հեղուկից գործածած է եղել: Այնուհետև Լիա Հովսեփյանի ամուսինը և տուն եկած մայրը՝ Սվետա Դավթյանը փորձել են Լիա Հովսեփյանին օգնություն ցույց տալ,զանգահարել են շտապօգնություն և տեսնելով,որ միգուցե շտապբուժօգնությունը ուշանա Արմեն Գալստյանին պատկանող ավտոմեքենայով Հովսեփյանին տեղափոխել են ,,Սևանի բժշկական կենտրոն,,ՊՓԲԸ, ապա Երևանի ,,Արմենիա բժշկական կենտրոն,, ՓԲԸ, որտեղ էլ 2018թվականի սեպտեմբերի 28-ին , ժամը՝ 03-30-ին, Լիա Հովսեփյանը մահացել է՝ օրգանիզմի սուր թունավորումից՝ արտածին, ուտիչ ազդեցություն ունեցող քիմիական միացությամբ քացախաթթվով թունավորվելու հետևանքով, որն էլ ուղղակի պատճառական կապի մեջ է գտնվում Լիա Հովսեփյանի մահվան հետ:

Գործով նախաքննության ընթացքում ըստ ստացված տվյալներ պարզվել է,որ Լիա Հովսեփյանը կենդանության օրոք հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ չի ունեցել, այդպիսի խնդիրներով բուժօգնության երբևէ չի դիմել և հաշվառման մեջ չի գտնվել:

Նախաքննության ընթացքում ըստ Լիա Հովսեփյանի հարազատների հայտնածի Լիա Հովսեփյանը իր հետ տեղի ունեցած դեպքի նախորդող ժամանակահատվածում, մասնավորապես ամուսնու կողմից իր դավաճանության փաստը հայտանբերելուց հետո, իրենց մոտ եղել են դեպքեր,որ կյանքից հիասթափված լինելու,այլևս ապրելու ցանկություն չունենալու մտքեր է արտահայտել, սակայն կոնկրետ իրեն վնաս պատճառելու ուղղությամբ որևէ կտրուկ գործողությունների չի դիմել : Ըստ հարազատների հայտնածի Լիա Հովսեփյանի նկատմամբ որևէ մեկը, այդ թվում ամուսինը՝ Արմեն Գալստյանը , երբևէ որևէ տեսակի բռնություն չի գործադրել և Լիա Հովեփյանը այդ քայլին՝ ինքնասպանության է դիմել ամոթի զգացումից ելնելով:

Նկատի ունենալով, որ քրեական գործով դեպքից առաջ տուժող Լիա Արայիկի Հովսեփյանի հոգեվիճակը և գործով նախաքննությամբ պարզաբանման ենթակա մի շարք այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբանության բնագավառի մասնագիտական հատուկ գիտելիքներ,ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ , 243-244 հոդվածներով

<u>Ը Ր Ո Շ Ե Տ Ի</u>

1.Վարույթումս գտնվող թիվ 50103718 քրեական գործով նշանակել հետմահու դատա-հոգեբանական փորձաքննություն, որի կատարումն հանձնարարել ,,Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան ,, հիմնադրամի բժշկական հոգեբանության ամբիոնի հոգեբան -փորձագետներին:

2.Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Մահվանը նախորդող ժամանակահատվածում ինչ հոգեվիճակում է գտնվել տուժող Լիա Արայիկի Հովսեփյանը: Գտնվել է արդյոք Հովեփյանը հոգեճնշված վիճակում,թե ոչ:

բ/ Եթե Լիա Արայիկի Հոսվեփյանը մահվանը նախորդող ժամանակահատվածում գտնվել է հոգեճնշված վիճակում,ապա այդ վիճակով պայմանավորված նա կարող էր ինքնասպանություն գործել, թե ոչ:

գ/ Եթե Լիա Արայիկի Հոսվեփյանը գտնվել է հոգեճնշված վիճակում ,ապա վիճակը ինչ հանգամանքներում է առաջացել և որն է դրա պատճառը/ները/:

դ/ Հաշվի առնելով Լիա Արայիկի Հովսեփյանի հոգեկան զարգացման մակարդակը, կարող էր,արդյոք, նա-լիովին գիտակցել իր գործողությունների նշանակությունը և ղեկավարել այդ գործողությունները:

3.Փորձագետին խնդրել՝ պատասխանել նաև այն հարցերին, որոնք, թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակության ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

Փորձագետին պարզաբանել ՀՀ քր.դատ.օր.-ի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քր.օր.-ի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

4..Քրեական գործի նյութերը և անհրաժեշտ այլ փաստաթղթերը կներկայացվեն համապատասխան միջնորդության հիման վրա:

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային
քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ,
արդարադատության երրորդ դասի խորհրդական /Հ.Հ.Մարտիրոսյան